

ԿՐԹԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԻՊԼՈՄՆԵՐ՝ ՎՐԱՍՏԱՆՑԻ ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻՆ

Վրացական բուհերի ուսանողները, մասնավորապես, 2015 թվականին Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարան, Իլիայի անվան համալսարան և Վրաստանի տեխնիկական համալսարան ընդունված ուսանողները ուսուցումը կանցկացնեն ամերիկյան չափորոշիչներին համաձայն և, բուհն ավարտելուց հետո վրացականի հետ միասին, կատանան ամերիկյան դիպլոմներ: Նման համաձայնություն ձեռք բերվեց Վրաստանի կրթության նախարար Թամար Սանիկիձեի և «Չազարանյակի մարտահրավեր-Վրաստան» կորպորացիայի գործադիր տնօրեն Մազդա Մադրաձեի ԱՄՆ կատարած այցի շրջանակներում:



վում այն մասնագիտություններում եւ ճյուղերում, որոնց զարգացումը անհրաժեշտ է երկրին: Ամերիկյան դիպլոմները մեր ուսանողների համար կբացեն նոր հեռանկարներ, աշխատանքով ապահովումը կլինի ավելի դյուրին»,- հավաստիացրին «Չազարանյակի մարտահրավեր-Վրաստան» կորպորացիայում:

Նշենք, որ 2011 թվականից կորպորացիան Վրաստանի գիտության և կրթության զարգացման ոլորտում արդեն ներդրել է 140 միլիոն դոլար:

Վրաստանի պատվիրակության անդամները ԱՄՆ-ում պաշտոնական հանդիպում ունեցան կորպորացիայի փոխնախագահ Քամրան Խանի հետ: Հանդիպմանը կողմերը առանձնակի ուշադրություն հատկացրին «Սան Դիեգո համալսարան և Վրաստան-2020» նախագծին, որի շրջանակներում, վրաստանցի ուսանողները ստանալու են ամերիկյան դիպլոմներ:

Նախագիծն ուղղված է տեխնիկական ֆակուլտետներում ուսուցման որակի բարելավմանը, ինժեներական և մաթեմատիկական կրթության արդիականացմանը: Նախագծի իրականացման համար, Վրաստանի կրթական համակարգ կփոխանցվի 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Ինչպես պարզաբանեցին Վրաստանում կորպորացիայի ներկայացուցիչները, երկիրը կատանա գրանտային բազմամիլիոն փաթեթներ, որոնք նախատեսված են տարբեր փուլերում սկսած դպրոցների ենթակառուցվածքի բարելավումից և ավարտած մագիստրոսի ծրագրերով, կրթական համակարգի բարելավմանը:

«Կրթության համակարգում միջոցների ներդրումը ռազմավարական բնույթ ունի: Ներդրումներ են կատար-

«ԱՊԱԿԱ ՍԵՐՈՒՆԴ» ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ԱՍԱԼՔԱԼՔԻՈՒՄ



Դեկտեմբերի 4-ին, Ախալքալաքի քաղաքային վարչության շենքում, անցկացվեց «Ապագա սերունդ» նախագծի շնորհանդեսը: Նշենք, որ այս նախագիծը իրականացնում է Ախալքալաքի երիտասարդական կենտրոնը՝ ամերիկյան USAID միջազգային կազմակերպության ֆինանսավորմամբ: Եռամյա նախագիծը նպատակադրված է դպրոցներում քաղաքացիական կրթության բարելավմանը, աշակերտների կողմից ժամանակակից հաղորդակցական ռեսուրսների ճիշտ օգտագործմանը, ինչպես նաև երիտասարդության ակտիվացմանը:

- Առաջինը սոցիալական մեդիան է, ուսուցումներ են մրցույթներ ենք անցկացնելու սոցիալական մեդիայի վերաբերյալ: Երեխաներին սովորեցնելու ենք ինչ հմտություններ ձեռք բերել և ինչպես լավագույնս օգտագործել ժամանակը, որը նրանք անցկացնում են համացանցում: Երկրորդ ուղղությունը փոքր շնորհադրամների համար նախագծեր կազմել սովորեցնել է և դրանք իրագործումը: Երրորդ ուղղությունը քաղաքացիական կրթության վերաբերյալ ուսուցիչների ու տնօրենների ուսուցումը կազմակերպել է, դպ-

րոցներին գրքեր կփոխանցենք քաղաքացիական կրթության վերաբերյալ, որոնք արժանացել են կրթության նախարարության հավանությանը: Չորրորդ ուղղությունը այն հմտությունների օգտագործումն է, որոնք երեխաները նախագծի իրագործման ընթացքում ձեռք են բերել իրենց կյանքում: Նրանք իրենք պետք է նախապատրաստեն ու իրականացնեն սոցիալական ակցիաներ, զանազան թեմաներով,- մեզ հետ գրույցում ասաց Ախալքալաքի երիտասարդական կենտրոնի տնօրեն Մակա Կոցիտաձեն:

Ինչպես նշեց Ախալքալաքի ռեսուրս կենտրոնի ղեկավարը, ծրագիրն իրականացվելու է Վրաստանի 480 դպրոցներում: «Ապագա սերունդ» ծրագրին մասնակցում է Նինոսմինդայի ութ և Ախալքալաքի 24 դպրոց: Նախագծին մասնակցող դպրոցները որոշվել են Վրաստանի կրթության և գիտության նախարարությունում: Ախալքալաքի երիտասարդական կենտրոնը երեք տարի այդ դպրոցների հետ աշխատել է չորս ուղղությամբ:

ՄԻԱՅՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՎ ԿԱՐԵԼԻ Է ԴԱՌՆԱԼ ԼԻԱՐԺԵՔ ՔԱՂԱՔԱՑԻ

Վրաստանի կրթական համակարգը, ուսուցման որակը բարելավելու և արդյունավետ դարձնելու համար, հեռատես ու համարձակ քայլեր է անում՝ եվրոպական չափանիշներին հասնելու աներբը վճարակալությանը:

Դա, հարկավ, ողջունելի նախաձեռնություն է: Վերջին տարիներին ուսումնա-դաստիարակչական աշխատանքը երկրում զգալի վերելք է ապրել: Առանձնապես, բեկումնային ընթացք ունեցավ մեր դպրոցում վրաց լեզվի դրվածքը. հայկական կրթօջախներում վրաց լեզուն ուսումնասիրվում է մայրենի խորությամբ ու չթուլացող հետևողականությամբ: Նկատենք, որ կենտրոնից հեռու ընկած ծայրամասային հայկական գյուղերում գործող երկլեզու ուսուցումը տվել է իր նկատելի պտուղները:

Բնականորեն ուսուցման կանոնավոր դասընթացներ են անցկացված նաև ուսուցչական կոլեկտիվների ու խմբերի համար: Այսօր արդեն վրացերենի ազգությամբ վրացի և հայ որակյալ մասնագետների եռանդուն ջանքերով, երկրի հայ աշակերտը ակնայտորեն կարող է իր մտքերը հաղորդել գրեթե անթերի վրացերենով: Եվ դա ուրախալի է Պետության մշտական հոգատարության շնորհիվ, աշակերտներն ու դպրոցը ապահովված են անվճար դասադրքերով ու համակարգիչներով: Այս ամենն իրականացվում է կրթության և գիտության նախարարության պատշաճ հսկողության ներքո:

Երկրի պետական լեզվին տիրապետելով միայն կարելի է դառնալ նրա լիարժեք քաղաքացին և, ի վերջո, բազմակողմանիորեն ինտեգրվել նրա կյանքին: Դրա ապացույցն այն է, որ հայ շրջանավարտներից շատերը մեծ սիրով

ըստ որի էլ կվարձատրվի:

Կրթական բնագավառի այս ուշագրավ նորույթը գրավել է նաև Ղզլբլիսայի հանրային դպրոցի մանկավարժների և տնօրինության (տնօրեն է.Ղուլիկյան) ուշադրությունը: Այս դպրոցը Ծալկայի շրջանի հնագույն կրթօջախներից է և, ինչպես միշտ, այսօր էլ շարունակում է մնալ գործող դպրոցներից մեծագույնը՝ Ե. Դասասենյակներով, Ե. աշակերտների քանակով: Դպրոցի թե՛ երիտասարդ, թե՛ փորձառու մանկավարժներն շտապում են տեսականորեն խորացնել իրենց մասնագիտական վարպետությունը և, հավասարիմ ուսուցիչների որակի զարգացման ազգային կենտրոնի հրահանգներին, նորօրյա պատասխանատվությամբ են պլանավորում իրենց անձնական աշխատանքային ծրագրերն ու ուսումնա-դաստիարակչական աշխատանքները:

Եվ վերջում, երկու հիմնախնդրի մասին. նախ՝ դպրոցում, ցավոք, չի գործում բուժետ-ճաշարան: Յոթ-ութ ժամ պարապող աշակերտը, անշուշտ, դպրոցում սնվելու կարիք կունենա: Երկրորդը՝ 35 տարվա վաղեմություն ունեցող մեր դպրոցի շենքը ոչ մի անգամ չի նորոգվել, իսկ մարզադահլիճը վերջերս վերանորոգվել է համազուլուցի անվանի բարերար, մոսկվայաբնակ Է.Արամյանի հովանավորությամբ: Հուսանք, որ այս հիմնախնդիրները 2015թ. կլուծվեն:

ՀԱՍԼԵՑ ԹԱՅԱՅԱՆ Մանկավարժ, Ի.Գոգոբաշվիլու մեդալակիր Գ.Ղզլբլիսա, Ծալկայի շրջան

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑՆՈՒՄ Ե ՄԵԿԸ, ՊՍԱՍԻՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՆ



Խորագիրը վարում է աշխատանքի, առողջապահության և սոցիալական պաշտպանության նախարարության հասարակության հետ կապի դեպարտամենտի պետ ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ:

ՀԱՐՑ. 15 տարեկան եմ, մեկ ամիս առաջ վախճանվեց մայրս, որը տնային տնտեսուհի էր և աշխատանքային ստաժ չուներ: Հարեւաններն ասացին, որ ինձ կենսաթոշակ է հասնում, թեպետ հայրս ոչ մի փաստաթուղթ չի ներկայացրել: Ասում են, որ առանց ստաժի կենսաթոշակ չեն նշանակի: Խորհուրդ տվեցին դիմել ձեզ: Ասացե՛ք խնդրեմ, մայրիկիս մահվան կապակցությամբ ինձ կենսաթոշակ հասնո՞ւմ է, թե՞ ոչ:

Վ.ՊԱՊԻԿՅԱՆ

Մառնեուկի ՊՍԱՍԻՍՏԱՆ. Սոր մահվան կապակցությամբ, բոլոր դեպքերում, կենսաթոշակ նշանակվում է: Խորհուրդ ենք տալիս, որ ձեր հայրը կամ որեւէ մերձավոր այդ հարցով անհապաղ դիմի ըստ բնակության վայրի շրջանային սոցիալական սպասարկման գործակալությանը: Անհապաղ դիմելու խորհուրդը պայմանավորված է նրանով, որ մոր մահվանից երեք ամսվա ընթացքում հասցնեք դիմել վերոնշյալ գործակալությանը, որպեսզի կենսաթոշակը նշանակվի խնամակալի մահվան օրվանից, հակառակ դեպքում, այն կնշանակվի դիմումը եւ մյուս բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ՀԱՐՑ. Հանգուցյալ ամուսինս երկրում բարձր պաշտոններ էր զբաղեցնում: Կցանկանայի պարզել, թե ո՞ր օրենքի համաձայն կենսաթոշակ կնշանակվի մեր անչափահաս զավակին: Ինձ ասացին, որ կենսաթոշակը նշանակվում է «Պետական կենսաթոշակների մասին» Վրաստանի օրենքով: Որքանո՞վ է դա համապատասխանում իրականությանը:

Ե.ՄԻՆԹԱՆՅԱՆ

Բաթումի ՊՍԱՍԻՍՏԱՆ. Վրաստանի նախկին բարձրաստիճան ծառայողի մահվան կապակցությամբ նրա անչափահաս զավակին նշանակվում է պետական փոխհատուցում: Փոխհատուցման չափը սահմանվում է «Վրաստանի նախկին բարձրաստիճան ծառայողների ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության երաշխիքների մասին» Վրաստանի օրենքով:

ՀԱՐՑ. Օրենքի համաձայն, ովքե՞ր են համարվում անգործունակ:

Հ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Թբիլիսի ՊՍԱՍԻՍՏԱՆ. Անգործունակ է համարվում մինչեւ 7 տարեկան անչափահասը (7-ից մինչեւ 18 տարեկանը համարվում է սահմանափակ անգործունակ), նաև այն անձը, ում դատարանը հոգեկան հիվանդության և թերի զարգացման պատճառով ճանաչել են անգործունակ: Նշենք նաև, որ անգործունակ ճանաչված անձի բուժման կամ առողջապահության նշանակալի բարելավման դեպքում, հնարավոր է դատարանը նրան ճանաչի՝ որպես գործունակ:

ՀԱՐՑ. Ունեն 3 տարեկան երեխա, որին հայրը տվել է իր ազգանունը, սակայն դրանից հետո նա երբեք երեխային չի հանդիպել, անհետացել է: Կցանկանայի իմանալ, կարո՞ղ եմ արդյոք համարվել միայնակ մայր:

Վ.ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ

Ախալքալաքի ՊՍԱՍԻՍՏԱՆ. Հաշվի առնելով հարցում բովանդակած պայմանները, դուք միայնակ մայր համարվել չեք կարող: Հոր ազգանունը կրող երեխան օգտվում է բոլոր այն իրավունքներից, որոնք տրված են զրանցված ամուսնությունից ծնված երեխաները: Եթե ձեր երեխայի հայրը չի ցանկանում մասնակցել երեխայի դաստիարակությանը, դուք իրավասու եք երեխային խնամելու համար գումար ստանալու պահանջով դիմել դատարանին:

ՀԱՐՑ. Ցանկանում եմ պարզել, ի՞նչ կարգով է իրականացվելու քաղաքացիական օրենսգրքում անմիջականորեն չնախատեսված իրավական հարաբերությունների կարգավորումը:

Ի.ՊԱՊԻԿՅԱՆ

Ծալկա ՊՍԱՍԻՍՏԱՆ. Օրենքում անմիջականորեն չնախատեսված հարաբերությունների կարգավորման համար օգտագործվում է նման հարաբերությունների կարգավորման իրավական նորմը: Նշենք, որ հատուկ հարաբերությունների կարգավորման համար վերոնշյալ իրավական նորմի օգտագործումն անթույլատրելի է:

ՀԱՐՑ. Թբիլիսիի բնակիչ եմ, երկրորդ աշխարհամարտի մասնակիցներին հավասարեցված անձ: Շտապ վիրահատության կարիք ունեմ: Ասացե՛ք, խնդրեմ, վիրահատության հարցով ո՞ւմ կարող եմ դիմել, և ի՞նչ գումար կպահանջվի դրա համար:

Ս.ԶԱԲԱՐՅԱՆ

Թբիլիսի ՊՍԱՍԻՍՏԱՆ. Խորհուրդ ենք տալիս այդ հարցով դիմել Թբիլիսիի քաղաքապետարանի սոցիալական սպասարկման և մշակույթի քաղաքային ծառայությանը (Թբիլիսի, Ժ.Շարտավայի փողոց 7, հեռ.՝ 2-72-22-22), որտեղ կարող եք ստանալ մասնագիտական խորհուրդ ինչպես վիրահատության, այնպես էլ դրա արժեքի մասին:







ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ



ԸՆԴՈՒՆԿԵՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Պեկտեմբերի 4-ին Հայաստանի Ազգային ժողովը քվեարկությամբ ընդունեց Հայաստանի 2015թ. պետական բյուջեի մասին օրենքը: Պետբյուջեի մասին օրենքը քվեարկեց 71, դեմ 46 պատգամավոր: Ձեռնպահ քվեարկող պատգամավորներ չեղան:

Հայաստանի 2015թ. պետական բյուջեն իրատեսական է: Այս մասին Ազգային ժողովում պետական բյուջեի քննարկման ժամանակ եզրափակիչ ելույթում հայտարարեց Հայաստանի վարչապետ Ռոբերտ Կոչարյանը: «Ըստ ներկայացված հաշվարկների, անկախ արտաքին եւ ներքին

տարաբնույթ տնտեսական զարգացումներից, ստանձնած պարտավորությունները պետք է իրականացվեն»,- նշեց ԶԳ վարչապետը: Նա ընդգծեց, որ 2015թ. պետական բյուջեն ունի սոցիալական ուղղվածություն, ինչի մասին վկայում է այն համազանցը, որ բյուջեում ծախսերի ամբողջ ծավալի շուրջ կեսը կազմում են սոցիալական, կրթական, մշակութային եւ առողջապահական բնագավառների

ծախսերը: «Միևնույն ժամանակ, բոլոր ոլորտներում առաջնորդվելու ենք հավասար պայմանների ապահովման եւ հասարակությանն ակառճալուր լինելու մեր կարգախոսով: Մենք նախաձեռնել ենք բազմաթիվ միջոցառումներ, որոնք նպաստակալորդված են էապես բարելավել գործարար միջավայրը, ամրապնդել պետության նկատմամբ գործարարների վստահությունը»,- ընդգծեց Ռոբերտ Կոչարյանը:

ԿԲՆՆԱՐԿՎԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂԱԹԻՈՒ ԽՈՅՄԱՆ ԴԵՊՐԵ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը ընդունել է աշխատանքային այցով Հայաստան ժամանած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորոյուժային:



Չորեքշաբթի քննարկել են ս.թ. դեկտեմբերին Մոսկվայում կայանալիք ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանի եւ կանոնադրական այլ մարմինների համատեղ միտի նախապատրաստական աշխատանքներին ու օրակարգերին վերաբերող հարցեր, անդրադարձել նաեւ խորհրդի նախորդ նստաշրջանում ըն-

դունված որոշումների իրագործման ընթացքին: Համդիպման ընթացքում, Նիկոլայ Բորոյուժային Սերժ Սարգսյանին զեկուցել է կազմակերպության ընթացիկ գործունեության, համագործակցության շրջանակներում արձանագրված արդյունքների հետ կապված հարցեր: Այդ համատեքստում գրու-

ման թեմա կդառնա նաեւ ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նստաշրջանում:

ԴՈՒՍՏԻ ԱՃԸ ՄՊԵԿՈՒԼՅԱՑԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔ Է

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Կարեն Ծճմարիտյանը դոլարի փոխարժեքի աճը եւ դրամի արժեզրկումը սպեկուլյացիայի հետեւանք է համարում:

տատանումներ լինեին: «Դա, համեմայն-դեպ, տնտեսական իրավիճակի արդյունք է: Ես կարծում եմ կկարգավորվի: Համեմայնդեպ, մեր ունեցած օրենսդրական եւ վարչական գործիքները, որ ունի Կենտրոնական բանկը, կարող են կարծ ժամանակում կարգավորել իրավիճակը»,- ասաց նա:

«Ինչ-որ մեկը շատ է առնում, քիչ է վաճառում, կամ ինչ-որ գործողություն են անում: Կենտրոնական բանկի հայտարարությունը կոչ է անում, որ սպեկուլյատիվ երեւույթներից չօգտվեն»,- նշեց նախարարը:

Ծճմարիտյանի խոսքով, դոլարի արժեքի վերականգնումը միգրացիոն գնաճի վրա ազդեցություն ունեցել է, բայց տնտեսությունում առկա ցուցանիշներն ու իրավիճակն այնպիսին չեն, որ մեկ օրվա մեջ այսպիսի



ԿԱՆԽԱԳԾՈՒՄ ԵՆ 9 ՏՈԿՈՍ ԱՃ

ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանի նախագահությամբ տեղի է ունեցել ԼՂՀ կառավարության հերթական նիստը, որի ընթացքում քննարկվել է «ԼՂՀ 2015թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծը:

Նախագիծը մշակելիս առաջնորդվել են նախագահի նախընտրական, կառավարության 2012-2017 թթ. գործունեության, ինչպես նաեւ 2014-2016 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագ-

համախառն ներքին արդյունքի ծավալը նախանշվում է 9,0 տոկոս տնտեսական աճի կանխատեսմամբ: Կատարված մակրոտնտեսական կանխատեսումների համատեքստում՝ 2015թ.

մար պլանավորված եկամուտների նկատմամբ կկազմի 9,9 տոկոս (ավելացում՝ 3,3 մլրդ դրամ): Հայաստանի Հանրապետության կողմից ԼՂՀ-ին հատկացվող միջաբնական վարկը 2015թ. կկազմի մոտ 45 մլրդ 518,7 մլրդ դրամ, որը, նախորդ տարվա համեմատ, ավելի է 1 մլրդ 828,6 մլրդ դրամով (4,2 տոկոսով):

ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՅԻԿ ՓՈԽԱԳՐՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐ ԶԻ ՇԱԳԻ

Հայաստանի ֆինանսների փոխնախարար Սուրեն Կարայանը Ազգային ժողովում ներկայացրեց ԵԱՏՄ երկրներ տարանցիկ փոխադրումների իրականացման եղանակները, երբ Հայաստանը կդառնա Եվրասիական տնտեսական միության անդամ: Փոխնախարարը նշեց, որ Հայաստանը տարանցիկ փոխադրումների հետ կապված խնդիրներ չի ունենալու:



«Հայաստանից Եվրասիական միության անդամ երկրներ հայկական արտադրության ապրանքներ տեղափոխող մեքենաները մեր մաքսավորների կողմից կքննվեն եւ Վրաստանի տարածքով կանցնեն

միության անդամ երկրներ: Իսկ միության անդամ մյուս երկրների մաքսավորներն ընդամենը կստուգեն այդ կմիքների առկայությունը: Այսինքն՝ կրկնակի մաքսագերծման գործընթացներ նախատեսված չեն»,- ընդգծեց Կարայանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԱՄՓՈՓՎԵՑ ԶԳԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՆՈՎ

Հայաստանում գյուղատնտեսական տարին 2014 թվականին եզրափակվում է բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության ծավալների աճի ցուցանիշներով, բացառությամբ՝ պտղի, որն էլ պայմանավորված էր տարեսկզբի կլիմայական վատ պայմաններով:

րության ծավալները եւս աճել են՝ կազմելով 340 հազար տոննա, նախորդ տարվա 311 հազար տոննայի փոխարեն»,- ասաց Գալստյանը: 2011-2014 թվականներին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են 49,1 հազ. հեկտարով: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2014 թվականին կազմել է 74,2 տոկոս, 2010 թվականին 63,2 տոկոսի դիմաց:

Այս մասին տեղեկացրեց Հայաստանի գյուղատնտեսության փոխնախարար Սամվել Գալստյանը՝ ամփոփելով գյուղատնտեսական ընթացիկ տարվա բուսաբուծության ոլորտի արդյունքները: Փոխնախարարի խոսքով, ցրտահարության հետեւանքները զգալի են եղել

հատկապես ծիրանի եւ ընկույզի արտադրության պարագայում: «Եթե 2013 թվականին արտադրվել էր ծիրանի 88,8 հազար տոննա համախառն բերք, ապա այս տարի ծիրանի արտադրության ընդհանուր ծավալը կազմել է ընդամենը 14,9 հազար տոննա»,- ասաց

ՎԱԿԵՐԱՅՎԵՑ ԵԱՏՄ-Ի ՇԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ


Պեկտեմբերի 4-ին Հայաստանի Ազգային ժողովը վավերացրեց Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության պայմանագիրը: Պայմանագրին կողմ քվեարկեց 103, դեմ 7, չեղանկատ 1 պատգամավոր: Հիշեցնենք, որ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության պայմանագիրը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ստորագրել է 2014թ. հոկտեմբերի 10-ին: Պայմանագրին ուժի մեջ կմտնի 2015թ. հունվարի 2-ից, երբ միության անդամ բոլոր երկրների խորհրդարանները կվավերացնեն ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության պայմանագիրը:

«ՀԱՅՈՐՈՂԱՅ ԿՐՈՆ»-Ի ԹԻՎԸ ԱՎԵՆՆՈՒՄ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության «Հայորդայ Կրոն»-ի թիվն ավելանում է: Հայաստանի յուրաքանչյուր քաղաքում «Հայորդայ Կրոն» ունենալու գաղափարն արդեն իրապեսական է: Պեկտեմբերի 4-ին Ամենայն Հայոց կաթողիկոսի մասնակցությամբ եւս մեկ «Հայորդայ Կրոն» բացվեց, այս անգամ Գյումրիում: Հայաստանում այս պահին գործում է 8 «Հայորդայ Կրոն»: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը դեռ իր՝ Արարադյան թեմի Առաջնորդական Փոխանորդ լինելու պարիներին նախաձեռնեց «Հայորդայ Կրոն»-ի ցանցի ստեղծումը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության աջակցությամբ:

ՌՈՔԵՐՏ ԱՄՐԻԽԱՆՅԱՆԸ՝ 75 ՏԱՐԵՎԱՆ

Պեկտեմբերի 1-ին Հայաստանի ժողովրդական արտիստ, Պեդական մրցանակի դափնեկիր, կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանի ծննդյան 75-ամյակի առթիվ «Արամ Խաչատրյան» համերգասրահում կայացավ հանդիսավոր երեկո:



Համերգն իր ներկայությամբ պատվեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը՝ առաջին րեկին Ռիպա Սարգսյանի եւ Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի ուղեկցությամբ: Հոբելյանական երեկոյին մասնակցեցին Հայաստանի պետական կամերային երգչախումբը, ինչպես նաեւ Գյումրիի «Տիրամայր» երգչախումբը՝ Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ: Ծրագրում հնչեցին Ռոբերտ Ամիրխանյանի «Պեդի կյանքը» ստեղծագործությունը՝ նվիրված Հայոց եղեռնի 100-րդ տարելիցին:

ԱՌԱՋՆԵՎԻՐ ԾԵՆՈՒԹԵՐԵԼ Է 52 ՏԱՐԵՎԱՆ ՀԱՍՍԿՈՒՄ

Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոնում դեկտեմբերի 1-ին բացառիկ դեպք է գրանցվել 52-ամյա կինը կեսարյան հատմամբ իր առաջնեկին է լույսաշխարհ բերել: Ծնվել է փղա՝ 3 կգ թաշով եւ 50 սմ հասակով: Երեխային եւ մոր առողջական վիճակը լավ է, նրանք դուրս են գրվել 3 օրից: Մայրը եղել է բուժանձնակազմի հսկողության ներքո, քանզի ակնհայտ էր, որ 52 տարեկանում ծննդաբերելն այնքան էլ հեշտ չէ: Բարեբախտաբար, ամեն ինչ լավ ավարտ ունեցավ: Նշենք, որ վերջին 3 տարվա ընթացքում սա 3-րդ դեպքն է, երբ կենտրոնում նման դեպք է գրանցվում: